ՍՈՎՈՐԵԼ ԱԶԱՏՎԵԼ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻՑ

Հաշտեցման բուժիչ ուժը

Մաս 2

Ներումը չէ..

... հանցանքի լրջության նվազեցում,
... վստահության ակնթարթային վերականգնում,
... հարաբերությունների վերսկսում
առանց որեվէ փոփոխության

Ինչու պետք է ներեմ նրանց ովքեր ինձ վիրավորել են

1. Որովհետև Աստված ներել է ինձ

«Միմյանց հետ քա՛ղցր եղեք, գթած՝ միմյանց ներելով, <u>ինչպես որ Աստված էլ Քրիստոսի միջոցով ձեզ ներեց</u>.» Եփեսացիս 4:32

2. Որովհետև վրդովմունքը չի աշխատում

«Իրոք, <u>բարկությունը</u> սպանում է <u>հիմարին</u>, ու նախանձը մեռցնում է անմիտին:» Հոբ 5:2

«Ո՛վ <u>իր անձն իր բարկությամբ պատառող</u>.» Հոբ 18:4

«Մեկը մեռնում է իր <u>առույգության</u> մեջ՝ ...Իսկ մյուսը մեռնում է <u>դառն հոգով, բարիք չճաշակած</u>:» Հոբ 21:23-25

3. Որովհետև ես ապագայում ավելի ներման կարիք կունենամ

«Որովհետև եթե դուք մարդկանց ներեք իրենց հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կների: Իսկ եթե դուք մարդկանց չներեք իրենց հանցանքները, ձեր Հայրն էլ ձեզ չի ների ձեր հանցանքները:» Մատթեոս 6:14-15

Ինչպես ազատվեմ նրանցից ովքեր ինձ վիրավորել են

1.Հրաժարվել դիմացինին հավասարվելու իմ իրավունքից

«<u>Ինքներդ վրեժխնդիր մի՛ եղեք</u>...այլ Աստծու բարկությա՛նը տեղ տվեք, որովհետև գրված է. «Իմն է վրեժխնդրությունը, ես էլ կհատուցեմ»- ասում է Տերը:» Հռովմայեցիս 12:19

«Պետրոսը, մոտենալով նրան, ասաց. «Տե՛ր, եթե եղբայրս իմ դեմ մեղանչի, <u>քանի՞ անգամ</u> նրան ներեմ՝ մինչև յո՞թ անգամ»: Հիսուսը նրան ասաց. «Քեզ չեմ ասում՝ մինչև յոթ անգամ, այլ մինչև յոթանասուն անգամ յոթ:» Մատթեոս 18:21-22

2. Կենտրոնանալ իմ կյանքում Աստծո նպատակի վրա

«Եթե դու քո սիրտն ուղղես և ձեռքերդ դեպի իրեն տարածես, ... Ահա այն ժամանակ անարատ երեսդ կբարձրացնես, հաստատուն կլինես ու չես վախենա: Որովհետև թշվառությունը կմոռանաս, այն անցած ջրերի պես կհիշես::» Հոբ 11:13-16

«...<u>բարի՛ք արեք</u> ձեզ ատողներին: <u>Օրհնե՛ք</u> ձեզ անիծողներին, <u>աղոթե՛ք</u> ձեզ նեղողների համար:» Ղուկաս 6:27-28

3. Չարին բարիով պատասխանիր

«Չարից մի՛ պարտվիր, այլ բարիո՛վ հաղթիր չարին:» Հռով 12:21

Ինչ բարի գործեր եմ անում ես այս աշխարհում

Հաջորդ Քարոզի Թեման

ԱՐԺԵՎՈՐԻՐ ԿՅԱՆՔԴ

Հովիվ Սարօ Խաչիկեան